ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
17.09.2009
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ նորակառույց շենքի պաշտոնական բացման մասին

Այսօր տեղի է ունենալու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ նորակառույց շենքի պաշտոնական բացման արարողությունը, որին մասնակցելու են ՀՀ վարչապետը, ԼՂՀ վարչապետը, ՀՀ ԿԲ նախագահը և այլ պաշտոնատար անձինք:

Նորակառույց շենքը տեղակայված է **Վ. Սարգսյան 10 հասցեում**: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 1470 քմ, այն ունի 7 հարկ, ինչպես նաև նկուղային հարկ: Շենքը Բանկի սեփականությունն է: Բանկը նախկինում իր գործունեությունը ծավալել է Խանջյան 13/2 հասցեում:

Բանկի մասին

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿը հիմնադրվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 2004 թվականի հոկտեմբերի 7-ին և ստացել է ՀՀ ԿԲ-ի N 84 արտոնագիրը 2005 թվականի փետրվարի 25-ին:

Բանկի սեփականատերն է Վարդան Սիրմաքեսը, որը շվեյցարական ժամացույցների «Ֆրանկ Մյուլլեր Ուոչլանդ» ընկերության հիմնադիրն է, համասեփականատերը և Գործադիր տնօրենը:

Բանկի կանոնադրական կապիտալը 2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ կազմում է 5 մլրդ դրամ (մոտ 13.3 մլն ԱՄՆ դոլար), 2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմում է 6.1 մլրդ դրամ (մոտ 16.1 մլն ԱՄՆ դոլար): Բաժնետերերի ժողովի որոշմամբ մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը Բանկի կանոնադրական կապիտալը համալրվելու է՝ կազմելով 7.1 մլրդ դրամ (մոտ 18.7 մլն ԱՄՆ դոլար): Բանկն ունի ավելի քան 500 հաճախորդ: Բանկի աշխատակիցները 2009թ. սեպտեմբերի 15 դրությամբ 75-ն են, ընդ որում աշխատակիցների միջին տարիքը կազմում է 32:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը գործունեություն է ծավալում երեք հիմնական ուղղություններով՝ կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային **(corporate, investment և private banking)** ծառայությունների ոլորտում: Բանկի նպատակային խմբերն են հանդիսանում՝ խոշոր կորպորատիվ հաճախորդները, ինչպես նաև փոքր, միջին ձեռնարկությունները:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդներին առաջարկում է ծառայությունների լայն տեսականի. ինչպես ավանդական բանկային ծառայություններ (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում), այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում՝ մասնավորապես ֆակտորինգ, ինչպես նաև ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում) և այլն:

Բացի այդ, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային բանկային ծառայություններ՝ հանդիսանալով շուկայի առաջատարներից մեկը այս ոլորտում:

- Բանկը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության պետական ներքին պարտքի կառավարման գործընկեր (գործակալ), որը Բանկին թույլ է տալիս հաճախորդներին սպասարկել ինչպես պետական պարտատոմսերի առաջնային, այնպես էլ երկրորդային շուկայում,
- Կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ, որի շրջանակներում արդեն իսկ իրականացրել է «Վալլետտա» ՍՊԸ-ի, «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ի, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի թվով 6 պարտատոմսերի թողարկման ծրագիր՝ 3 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր

ծավալով և մասնակցել է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման ծրագրին՝ տեղաբաշխելով ավելի քան 465 մլն դրամի բաժնետոմսեր՝ հանդիսանալով շուկայի առաջատարը այս ոլորտում:
- Բանկն իր հաճախորդներին առաջարկում է բրոքերային ծառայություններ՝ արժեթղթերի ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում:
- Պետական և կորպորատիվ արժեթղթերի գծով Բանկը մատուցում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) ծառայություններ՝ ապահովելով արժեթղթերի (պետական և կորպորատիվ պարտատոմսերի) շուկայի իրացվելիություն: Ներկայումս «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացնում է 4 պետական ուղենշային պարտատոմսերի և 2 կորպորատիվ պարտատոմսերի պարտադիր գնանշումներ:

2008թ. Բանկն անդամակցում է հետևյալ կազմակերպություններին՝
Հայաստանի բանկերի միություն, Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միություն, Հայաստանում Ամերիկյան առևտրի պալատ, Հայաստանի ֆոնդային բորսա:
2008թ.-ից Բանկը պաշտոնապես դարձավ Միջազգային առաջատար ֆակտորինգային ասոցիացիայի (FCI - Factors Chain International) անդամ և միակ Բանկը տարածաշրջանում, որն անդամակցում է այդ կազմակերպությանը, ինչը հնարավորություն է ընձեռում 65 երկրներում գտնվող 244 անդամ-բանկերի միջոցով ծավալել միջազգային ֆակտորինգային գործառնություններ: Որպես այլընտրանքային ֆինանսավորման տեսակ Բանկն առաջարկում է ճկուն ֆակտորինգային ծառայություններ, ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում: Բանկը հանդիսանում է շուկայի առաջատարը ՀՀ-ում և համագործակցում է հանրապետության խոշոր ընկերությունների հետ:

2008թ.-ից Բանկը համագործակցում է Գերմանահայկական հիմնադրամի հետ «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի շրջանակներում, որի արդյունքում արդեն իսկ իրականացվել են 5 հիդրոէլեկտրակայանների վարկավորում:
2009թ. համագործակցություն է սկսվել ՎԶԵԲ-ի (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ) հետ՝ ՓՄՁ վարկավորման համար երկարաժամկետ միջոցների ներգրավման համար:

2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ Բանկի ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կազմել է ավելի քան 163 մլն ՀՀ դրամ, որի արդյունքում Բանկի ստեղծման օրվանից կուտակված չբաշխված շահույթը կազմել է ավելի քան 596 մլն ՀՀ դրամ, ընդ որում կուտակված շահույթի հաշվին Բանկի կողմից ստեղծվել է 200 մլն դրամի չափով գլխավոր պահուստ, որը հիմնականում կարող է օգտագործվել չնախատեսված վնասները ծածկելու համար: 2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 6.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 49%-ով: Բանկի ընդհանուր ակտիվները 2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ կազմել են 33.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 41%-ով: 2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտը կազմել է 762 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 452 մլն ՀՀ դրամի դիմաց: 2009թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ վարկային ներդրումները աճել են 2.7 մլրդ դրամով կամ 44 %-ով՝ կազմելով 8.9 մլրդ դրամ:

Հավատարիմ մնալով իր ընտրված ռազմավարությանը, Բանկն առաջիկայում նախատեսում է ակտիվացնել իր գործունեությունը ֆինանսական շուկայում՝ ներդնելով կորպորատիվ, ներդրումային բանկային նոր ծառայություններ, կտրուկ ավելացնելով հաճախորդների թվաքանակը և բարելավել մատուցվող ծառայությունների որակը:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10
Հեռ՝ +374 10 52 95 93, 58 44 19
Ֆաքս՝ +374 10 52 95 91
info@armswissbank.am
www. armswissbank.am